

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ
դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների
կիրառումը

Կատարող՝ Լիլիթ Պոլեյան

«Գյումրու տնտեսագիտական վարժարան» ՊՈԱԿ

դպրոց

Ղեկավար՝ ք.գ. թ, դոցենտ Աննա Յալոյան

անուն, ազգանուն

ԳՅՈՒՄՐԻ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
ԳԼՈՒԽ1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	
1.1 Արդյունավետ ուսուցման մոտեցումներ	6
1 .2 Ուսուցման մեթոդներ և հնարներ.....	10
ԳԼՈՒԽ 2 ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ	
2.1 Փոխներգործուն, ինտերակտիվ մեթոդներ.....	14
2.2 Պասիվ և փոխներգործուն ուսուցման մեթոդներ. դրանց տարբերությունը	24
Եզրակացություն	27
Օգտագործված գրականության ցանկ	28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը : Մեր պետության գործունեության այլ ոլորտների շարքում կրթական համակարգը նույնպես վերափոխումների ընթացքի մեջ է: Հասարակական հարաբերությունների կտրուկ փոփոխությունն այսօր ՀՀ-ում պահանջում է կրթության նոր մակարդակ, որը ենթադրում է նոր բովանդակություն, իրականանալի նպատակներ, հստակ ռազմավարություն, մարտավարություն և կրթական համակարգի կառավարման նորագույն տեխնոլոգիա: Յուրաքանչյուր պետության կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը հիմք է հանդիսանում տվյալ պետության ամրապնդման գործում: Այդ իսկ պատճառով պետք է մեծ ուշադրություն դարձնել կրթական դաշտում տեղի ունեցող փոփոխություններին, առկա խնդիրներին, մասնավորապես պետք է ուշադրությունը սևեռել նոր ՀՊԶ-ին , որով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝

- գիտելիք.
- հմտություն.
- դիրքորոշում.
- արժեքային բաղադրիչ:Այս բաղադրիչները շղթայական կապի մեջ են գտնվում իրար հետ, և առանց մեկը մյուսի գոյություն ունենալ չի կարող , պետք է շարունակաբար , ամենօրյա հետևողական և քրտնաջան աշխատանքի շնորհիվ զարգացնել վերոհիշյալ բաղադրիչները և ձեռնամուխ լինել նոր կարողությունների ձեռքբերմանը, ինչն էլ կարևորվում է ՀՊԶ -ում:

Ուսումնական բնագավառը կրթության բովանդակության որոշակի տիրույթ է, որն առանձնանում է ուսումնասության օբյեկտով և բնույթով, գործունեության և ճանաչողության յուրահատուկ մեթոդներով և ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև

ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում, իսկ թե ինչպես է տեղի ունենում այդ ամենը մենք ցույց կտանք սույն հետազոտական աշխատանքում, կանրադառնանք ուսուցման ակտիվ , պասիվ , փոխներգործուն մեթոդներին և ցույց կտանք դրանց դրական և բացասական կողմերը : Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Մանկավարժական ինտերակտիվ փոխներգործուն մեթոդները դիտարկվում են իբրև մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացման ուղիներ՝ դրսևորվելով որպես ավանդական մանկավարժական մոտեցումների այլընտրանքներ:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ մանկավարժական մեթոդներն ու տեխնոլոգիաները յուրահատուկ մանկավարժական այլընտրանքներ են, որոնք կարող են լուծել ոչ միայն ուսուցման գործընթացն առավել ակտիվ, ստեղծագործական և արդյունավետ դարձնելու հիմնախնդիրը, այլև նպաստել անձի ստեղծագործական ներուժի զարգացմանը, ինքնաբացահայտմանն ու ինքնաընկալմանը, ինչպես նաև՝ օգտակար լինել կենսաբանորեն առողջ ու հատուկ կարիքներով երեխաների համատեղ ուսումնական գործունեության կազմակերպման հարցում, որպես յուրահատուկ մեխանիզմներ՝ դարձնելով ուսուցման գործընթացը առավել ներառական, համագործակցային ու կառուցողական: Բազմիցս համոզվել ենք , որ կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի

վերջնարդյունքներին, նպաստելով սովորողների կոմպետենցիաների ձեռքբերմանը , այդ իսկ պատճառով թեման խիստ արդիական է հանրակրթական դպրոցում :

Հետազոտական աշխատանքի նպատակը :Թեմայի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակն է բացահայտել ակտիվ և փոխներգործուն մեթոդների ներգրավման կարևորությունը ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման գործում, մեկնաբանել դրանց դերն ուսուցման գործընթացի բարելավման տեսանկյունից:

Առաջադրված նպատակից բխում են հետազոտության հետևյալ **խնդիրները**՝

- Ցույց տալ մեթոդի կարևորությունը դասի արդյունավետությունը ապահովելու գործընթացում.
- Ներկայացնել ակտիվ և փոխներգործուն մեթոդների զուգակցումը դասապրոցեսի ընթացքում.
- Ներկայացնել նոր մոտեցումները, ստանդարտ մոտեցումներին զուգահեռ:

Հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում օգտագործվել են մանկավարժական գիտահետազոտական **մեթոդներ**՝ գիտամանկավարժական գրականության ուսումնասիրություն, դիտում, զրույց, համադրում, ընդհանրացում, համակարգում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը կազմում է 28 համակարգչային էջ:

ԳԼՈՒԽ1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

1.1 Արդյունավետ ուսուցման մոտեցումներ

Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով լավ գիտի, թե ինչ պետք է իմանան իր աշակերտները եւ ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին:

Վ. Ա ՍՈՒԽՈՍԼԻՆՍԿԻ

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Այն սովորողների կրթության, զարգացման եւ դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների եւ սովորողների գործունեության կազմակերպման ձև: Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Ուսուցումը կոմպլեքս և բազմակողմանի հանձնարարություն է: **Ուսուցման մեթոդների** կամ հմտությունների ցուցակը պարունակում է շատ մտքեր ու օրինակներ: Այնուամենայնիվ, հնարավոր է խմբավորել դրանք ուսուցման մեթոդների, հմտությունների և մոտեցումների որոշ հիմնական ոլորտներում, որոնք էական են արդյունավետ ուսուցման համար: Երբ որոշում ենք, թե ուսուցանելիս ինչ **մեթոդներ օգտագործել**, կարևոր է հիշելը, որ մեթոդները և հմտությունները միայն միջոցներ են նպատակին հասնելու համար, և ոչ թե ուսուցման նպատակներ և իրենց նպատակներ: Ուսուցիչները պետք է ընտրեն մեթոդներ, որոնք լավագույնս կօգնեն աշակերտներին հասկանալ ուսուցանվող նյութի բովանդակությունը և որ կհեշտացնեն սովորելը և կիրառելը: Որոշակի կարողություն կամ հմտություն օգտագործելու նպատակը մտքում պահելը կօգնի ուսուցիչներին իրագործել այն ավելի իմաստավից ձևով: Նաև կարևոր է հիշել, որ առանց ցանկության նույնիսկ ամենաարդյունավետ մեթոդները և մոտեցումները հաջողության չեն հասնի:

Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ **ավանդական/պասիվ/** և նոր ժամանակակից՝ **փոխներգործուն** մեթոդներ: **Պասիվ** են համարվում բացատրական, գնական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է

պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: **Փոխներգործուն մեթոդների** հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող **մեթոդներն** ընդունված է անվանել **ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ**:¹Քաղաքակրթության զարգացման ողջ պատմության ընթացքում հանրակրթական դպրոցը ամենաեական ազդեցությունն է ունեցել գիտատեխնիկական առաջընթացի վրա, ինքն էլ զարգացել է այդ առաջընթացին զուգահեռ: Դպրոցը թույլ է տալիս ձևավորել մտածող, ստեղծագործող և ժամանակի բոլոր մարտահրավերներին պատրաստ, ճկուն և մրցունակ քաղաքացիներ: Հանրակրթական դպրոցում առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է հիմնարար գաղափարների հենքի վրա՝ պարուրաձև սկզբունքով՝ հիմնական դպրոցի ուսումնասիրված նյութը ընդլայնվելով և խորացնելով ավագ դպրոցում: Հիմնարար գաղափարների շուրջ առարկայական ծրագրի կառուցումը հնարավորություն է ընձեռում արդյունավետ ապահովելու ներառարկայական և միջառարկայական կապերը՝ նպաստելով սովորողների ընդհանրական գիտական աշխարհայացքի ձևավորմանը:Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Հետազոտությունները ցույց են տվել , որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, ազդել նրա վրա: Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության

¹ Ամիրջանյան Յուրի, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, մանկավարժ. հրատ.: Երևան 2004թ

մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը, ուսուցիչը պետք է **դասը պլանավորի** այնպիսի **մեթոդներով**, որը կշարժի երեխայի հետաքրքրությունը և նրան կներառի դասապրոցեսի մեջ

Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում դասապրոցեսը կազմակերպել ոչ միայն **պասսիվ մեթոդներ** օգտագործելով այլև **փոխներգործուն, ինտերակտիվ մեթոդներ**, փորձը ցույց է տվել որ, երբ դասը մատուցվում է ավանդական և ժամանակակից մեթոդների միախառնումից դասն ավելի արդյունավետ է դառնում, նյութն ավելի հեշտ ու հասանելի է լինում աշակերտին, այդ իսկ պատճառով պետք է օգտագործել հետաքրքիր հնարներ, **ստանդարտ** /պասսիվ/ մոտեցումներին զուգահեռ կիրառել նաև նոր մոտեցումներ գծապատկերներ, պատմություններ, մետափմացության թերթիկներ, և **ակտիվ ուսուցման** բազմաթիվ այլ մեթոդներ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:

**✗ Անջատ փաստերով
ուսուցում**

Եթե աշակերտներին առաջարկեք 5 վայրկյան Նայելուց հետո հիշել հետևյալ տառերը, ապա շատ ցածր արդյունք կստանաք

Օ
դվ
եց
եպ
հլ
դի
տու
և



**✓ Կապակցված
ուսուցում**

Եթե աշակերտներին առաջարկեք 5 վայրկյան Նայելուց հետո հիշել հետևյալ տառերի միացությունները, ապա արդյունքը կլինի գրեթե 100%

Օդ
Վեց
ԵՊՅ
ԼՂՅ
ՏՈՒՆ

Սույն պատկերում երկու դեպքում էլ օգտագործված է տառերի նույն շարքը: Պարզապես երկրորդ դեպքում տառերի կապակցումն իմաստալից է: Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից:

Այսպիսով՝ Դասի պլան կազմելիս խորհուրդ է տրվում առանձնացնել երեք հիմնական կետեր՝

- Դասի կառուցվածքային տարրերը
- Ուսուցչի գործունեությունը
- Աշակերտի գործունեությունը:

Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել, կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշները: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը, ստուգման ձևերը և միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը:

1.2 Ուսուցման մեթոդներ և հնարներ

Ի՞նչ մեթոդներ են այսօր անհրաժեշտ ուսուցչին արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար: Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ: Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր կամ ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Դրանց առանձնահատկություններն են.

- աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի
- աշակերտը ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը
- աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար
- աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններնյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել ու կիրառել սովորածը ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Ինչպես ասել է Ժան Ժակ Ռուսո Երեխան ունի իր առանձնատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան փորձել

փոխարինել դրանք մեր ունակություններով: Թերևս մեծ մտածողը չէր սխալվում այն հարցում, որ պարտադրանքը, սեփական կարծիքի ու գաղափարի հարկադրումը որևէ դրական արդյունք չի ունենալու: Ելնելով այն հանգամանքից, որ կրթական հաստատությունը սովորողին պետք է ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնական ու ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ, անհրաժեշտություն է առաջանում ուսումնառության ընթացքում հաշվի առնել սովորողների՝ որպես ապագա մասնագետների՝ կարողունակությունների ձևավորման գործընթացը ևս: Կարողունակությունները, որպես անձի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, գործունեության ձևերի փոխկապակցված համախումբ, ձևավորվում են ուսումնական գործընթացներում, տարբեր առարկաների տիրապետման շնորհիվ և ծառայում են ապագա արդյունավետ գործունեության իրականացմանը:² Ասվածից կարող ենք եզրահանգել, որ սովորողի մոտ ինքնուրույն գործելու, որոշումներ կայացնելու, նախաձեռնողական վարք ձևավորելու համար առաջնային նախապայմաններ են հանդիսանում ուսումնական գործընթացի ժամանակ հնարավորություններ ստեղծել, որպեսզի սովորողը հնարավորություն ունենա որոշում կայացնելու, այս կամ այն խնդրի վերաբերյալ պատասխանատվության գիտակցում ձևավորելու, աստիճանաբար ձգտի կայացման ու ձեռքբերումների: Անշուշտ, այս ամենի համար առաջին հերթին կարևոր է, որ սովորողը ուսումնական գործընթացից կարողանա ստանալ առավելագույնը:

Արդի կրթական բարեփոխումների շրջանում մեծապես կարևորվում է կրթության առաջնային շահառուների՝ սովորողների դերը դասընթացի ժամանակ: **Աշակերտակենտրոն** ուսուցումը մեծապես վերաձևակերպում է սովորողի մասնակցությունը բուն դասի ընթացքին՝ տալով նրան հետազոտելու, պրպտելու, **սովորեցնելով սովորելու**, նախագծելու, քննադատելու հնարավորություն: Ստացվում է, որ սովորողը, պասիվ դաշտից ակտիվ դաշտ գալով, դառնում է էլ ավելի ինքնուրույն, նախաձեռնող, փորձում է ստեղծագործաբար մտածել ու գործել՝ արդյունքում ամբարելով գիտելիքների, հմտությունների ու կարողությունների

² Ղույումչյան Գ.Ե. Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով : Գիրք I – Եր., Զանգակ-97, 2005թ

կայուն պաշար:

Այսպիսով, կարծում եմ, որ սովորողի համար կարմիր գծերը ջնջելով, **նորագույն մեթոդներով** հագեցած ու տեխնոլոգիապես հագեցած դասեր իրականացնելով՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է հասնել կրթության **ՀՊԶ-ով** սահմանված վերջնարդյունքներին՝ խթանելով սովորողների ինքնուրույն գործելուն, նախաձեռնող ու նորարար լինելուն և ստեղծագործաբար գործելուն: Սովորողների իմացական ձեռքբերումներն աճում են, երբ նրանք օգտագործում են մտածողության մեթոդների ողջ համալիրը: Այդ մեթոդների օգտագործումն ուսումնական նպատակային փորձառության ընթացքում օգնում է սովորողին՝ ինքնուրույն սովորելու ընթացքը գիտակցել որպես սեփական գործունեություն (Պալինկսարև Բրաուն, 1989):21-րդ դարի մարդուն՝ ապահով ապրելու և ներդաշնակ գործելու համար անհրաժեշտ են քննադատական, ստեղծագործական և գործնական հմտություններ : Ժամանակակից դպրոցը պահանջ ունի այնպիսի մանկավարժների, ովքեր իրենց մասնագիտական որակների շնորհիվ կարողանում են հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդները՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողի մոտ մի շարք կարողունակություններ, որոնք առաջնային դեր ունեն այսօրվա աշխարհում:

Ակտիվ ուսուցումը՝ համեմված մի շարք փոխգործուն մեթոդամանկավարժական հնարներով, ինչպիսիք են՝ կլոր սեղան, բանավեճ, ԳՈՒՄ, մտազրոհ, ճանապարհային քարտեզ, ունակ է բավարարել սովորողների կրթական պահանջմունքները՝ միևնույն ժամանակ սովորողի մոտ ձևավորելով շփվելու, հաղորդակցվելու, համագործակցելու, երևակայելու, ապագան կանխատեսելու և պլանավորելու, սեփական կարծիք ձևավորելու և արտահայտելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշում կայացնելու կարողությունները:

Միևնույն ժամանակ կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետությունն այսօր պայմանավորված է նրանով, թե որքանով է ուսուցիչը պատրաստ համագործակցության մեջ մտնել սովորողի հետ, թույլ տալ որ վերջինս երբեմն շրջանցի **ավանդական դասի** կարմիր գծերը, լինի ազատ իր

որոշումների մեջ, հայտնի իր հետաքրքրությունների մասին՝ սոցիալականացնելով սեփական պահանջմունքները: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Միջին և ավագ դպրոցի սովորողների համար, անշուշտ, առաջնահերթություն է ուսուցչի կողմից խորացված գիտելիքի հաղորդումը, սովորողի ջանքերով դրա ամրակայումն ու ամրապնդումը:

Այնուամենայնիվ, բուն գիտելիքի հաղորդմանը զուգահեռ անչափ կարևոր է այդ գիտելիքի իրացումը գործնականում: Կարողենք ասել, որ միայն տեսական գիտելիքը որևէ հիմնաքարային ազդեցություն չի կարող ունենալ սովորողի իմացական կարողություններն ամրապնդելու առումով, քանի որ գործնական պարապունքների բացակայության պարագայում, սովորողի մոտ ուսուցանվող նյութը կունենա մեխանիկական բնույթ: Զրույցը, բանավեճը, խմբային կամ անհատական եղանակով արդյունքների ամփոփումը սովորողի մոտ կայունացնում և ամրակայում է ստացած գիտելիքը: Նման օրինակ գործնական դասերը սովորողներին թույլ են տալիս համագործակցել միմյանց հետ, սովորել իրար սովորեցնելով, եզրահանգումներ անել, բանավիճել, գտնել համախոհներ՝ միևնույն ժամանակ անցնում ինտեգրվելով համագործակցային աշխատանքի մեջ: Ի վերջո սոցիալականացման գործընթացի հաջող հոսքը կախված է անհատի ակտիվ դիրքից և սոցիալական փորձի ձուլման աստիճանից:

ԳԼՈՒԽ 2 ԳԻՏԵԼԻՔԻ ԱՏՈՒԳՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

2.1 Փոխներգործուն, ինտերակտիվ մեթոդներ

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին

րուպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք մեթոդական մի քանի հնարներ:

1. Խորհրդավորություն

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են րուպե առաջ բացահայտել գաղտնիքը

Հետևաբար՝ երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ.



«Ես մտքիս մեջ բան եմ պահել: Այն վերաբերում է մեր ուսումնասիրած թեմաներից մեկին: Դուք պետք է ինձ հարցեր տաք: Ես հարցերին կարող եմ պատասխանել միայն «այո» կամ «ոչ» տարբերակով: Դուք պետք է հարցերն այնպես ձևակերպեք, որ «այո» կամ «ոչ» պատասխանը ձեզ օգնի հասկանալ, թե ինչ եմ պահել մտքիս մեջ»:

2. Գուշակություն

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ կարող ենք առանձին թղթերի վրա գրել «կոնիվ», «պատերազմ», «տարակարծություն», «անհամաձայնություն» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը: Պատասխանն է՝ կոնֆլիկտը:

3. Զարմանք, անսպասելիություն

Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով

սկսելը շատ կարևոր է: Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը: Վերջինս ձևակերպվում է պատկերում արտացոլված ոճով: Օրինակ՝ կարելի է դասի սկզբում հարցնել՝ ի՞նչ կլինեք, եթե 1903 թ.-ի հունիսի 12-ի օրենքը Խրիմյան Հայրիկը ընդուներ: Մեկ այլ տարբերակ է աշակերտների կողմից ուրիշի դեր ստանձնելը: Օրինակ՝ պատկերացրեք դուք Իսրայել Օրին եք: Ինչպե՞ս կվարվեիք:




4. Մեջբերումներ

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: Ահա մի քանի օրինակներ, որոնք կարելի է օգտագործել հատկապես հասարակագիտության դասերին՝ Ամեն արժեք գեղեցկություն է դառնում, բայց գեղեցկությունն ամեն արժեքից բարձր է... Երվանդ Քոչար Բարոյականությունն այնպիսի բան է, որը մեզ այլ բաներից ավելի շատ է հետաքրքրում: Մենք կարծում ենք, որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա... Դեյվիդ Հյուն Դարաշրջանի կարևոր հարցերը լուծվում են ոչ թե ճառերով և մեծամասնության քվեարկությամբ, այլ երկաթով և արյամբ: Օ. Բիսմարկ Ինձ երբեք ծանոթ չի եղել մի բան՝ հանձնվել:

5. Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈԻՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈԻՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է M-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը



6. Մտազրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտազրոհն է: Մտազրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտազրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտազրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտազրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտազրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտազրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտազրոհին: Պարզապես լրացնում է այն:


7. Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն Ուսուցիչը դասարանից դուրս է ուղարկում երեք սովորողների, չասելով՝ ինչու: Դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, տասնհինգ վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վերջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է՝ ինչի մասին է խոսքը: Դասարանին երրորդ մասնակցի պատմածը էականորեն տարբերվում է նրանց տեսածից,

որից հետո կազմակերպվում է քննարկում-վերլուծություն: Երեխաները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցությունը կարող է հանգեցնել հակասությունների:

. Ֆրայերի մոդելը

Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրել՝ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:

Ֆրայերի մոդել






. Մտքերի հոսք Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում գրել, թե ինչ հասկացան նոր նյութից: Այնուհետև ուսուցիչը կարող է շարունակել նյութը բացատրել կամ կարող է առաջարկել գույգերով աշխատել:

Աշակերտները միմյանց հետ քննարկում են հետևյալ հարցերը:


-  **Ի՞նչ ընդհանուր բաներ ենք գրել**
-  **Կա՞մ մի կարևոր բան, որ երկուսս էլ մոռացել էինք գրել**
-  **Արդյո՞ք որևէ սխալ բան ենք գրել**
-  **Ինչո՞ւ ենք հատկապես գրել այս բաները**

Վարդ, փուշ, բողբոջ

ՎԱՐԴ	ՓՈՒՇ	ԲՈՂԲՈՋ
		
<i>Նշեք մեկ բան, որ լավ հասկացաք</i>	<i>Նշեք մեկ բան, որը սովորելիս դժվարության բախվեցիք</i>	<i>Նշեք մեկ բան, որը սովորելուց հետո ձեր գլխում նոր միտք ծագեց</i>

Մետախմացության թերթիկ

Այս թերթիկը լրացնելիս կատարեք հետևյալ չորս քայլերը՝ 1. Ընթերցե՛ք հարցերը: Դրե՛ք աստղանիշ բոլոր այն հարցերի դիմաց, որոնց պատասխանները գիտեք: Դրե՛ք «^օ» նշանը բոլոր այն հարցերի վրա, որոնց պատասխանները չգիտեք: 2. Գրե՛ք իմացած բոլոր հարցերի պատասխանները պատասխան սյունակում: 3. Մեկ անգամ ևս ընթերցեք այն հարցերի պատասխանները, որոնց վրա դրել եք «^օ» նշանը: 4. Ստուգե՛ք՝ արդյոք ճիշտ եք պատասխանել այն հարցերին, որոնց դիմաց աստղանիշ էիք դրել:



Դասի զեկուցող Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին: **Ես-Դու-Մենք** Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի Ժամանակակից դպրոցներում: Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում են» խմբի հետևում: Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «Ես-դումենք» հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկեք խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը:

Լուսակիր Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչները դասապրոցեսում իրենց տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ են անցնում: Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու, թե ինչ չափով են տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները: Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը: Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին: Յուրաքանչյուր աշակերտ բարձրացնում է իր մոտ գտնվող կանաչ, դեղին, կարմիր թղթերից որևէ մեկը:



Ամբողջությամբ յուրացրել է թեման



Մասնակի է յուրացրել թեման



Չի յուրացրել թեման

Եթե աշակերտը բարձրացնում է կանաչ թերթիկը, նշանակում է ամբողջությամբ յուրացրել է տվյալ թեման: Եթե բարձրացնում է դեղին թերթիկը, նշանակում է մասնակի է յուրացրել թեման: Իսկ կարմիր թերթիկ բարձրացնում են այն աշակերտները, ովքեր չեն յուրացրել թեման: Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է, ապա նախընտրելի է, որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային: Իսկ եթե թիվը մեծ չէ, ապա կանաչ գույն բարձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին:

Կիսատ նախադասություն

Կիսատ	Նախադասություն
	Ես այսօր սովորեցի ...
	Ինձ զարմացրեց ...
	Այսօրվա դասի ամենաօգտակար բանը ...
	Ինձ հետաքրքրեց ...
	Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ ...
	Մի բան, որ չհասկացա ...
	Մի բան, որ կուզեի ավելի իմանալ ...
	Այս դասից հետո ես գգում եմ ...
	Այս դասից ավելի կսովորեի, եթե ...

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել:

«Խաթարված հերթականություն»

Այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը. պետք է նախօրոք պատրաստել թղթեր, վրան գրել տեքստից ընտրված կարևոր անունները, փաստերը, իրադարձությունները: Դրանք խառը հերթականությամբ փակցնել գրատախտակին, հետո խնդրել, որ այն դասավորեն հերթականությամբ:

Միավորային գնահատման իրականացում Quizizz առցանց գործիքի միջոցով



Այս ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում: Գործիքն օգտագործելիս սովորողները պետք է իմանան համապատասխան հարցման մուտքի կոդը: Սովորողները հարցադրումներին հետևում և պատասխանները նշում են տիրույթին միացված ցանկացած գործիքի (հեռախոս, համակարգիչ, պլանշետ) օգնությամբ: Հարցման ավարտին հնարավոր է MS Excel ֆորմատով ներբեռնել սովորողների միավորային գնահատականները: Այս տիրույթում աշխատելիս գնահատվում է սովորողների կատարած առաջադրանքների և՛ արագությունը, և՛ ճշտությունը: Վարժություններ ստեղծելիս հնարավոր է բազմակի ընտրանք ձևաչափով հարցադրումներ կազմել: Հարցերի հաջորդականությունը խառնվում է համակարգի միջոցով:³

«Կլոր սեղան»

Մեթոդը կիրառվում է որպես որևէ հարցի քննարկման միջոց: «Կլոր սեղան» մեթոդի հիմնական մասը կազմում է դիսկուսիան կոլլեկտիվ քննարկվում է որևէ հարց, համեմատվում կարծիքներ: Մասնակիցները կարող են լրացնել միմյանց կամ հակասել մեկը մյուսին: Մեթոդի առանձնահատկություններն են՝ 11 1. Բոլոր մասնակիցները պետք է կարծիք հայտնեն և ձգտեն, որ իրենց հասկանան: 2. Բոլոր մասնակիցները հավասարազոր են, ոչ ոք իրավունք չունի թելադրել իր կամքը և կարծիքը: «Կլոր սեղանի» առանձնահատկությունը այն է, որ այն պետք է իրոք կլոր լինի, այսինքն մասնակիցների շփումը պետք է լինի «աչք աչքի» ինչը բերում է ակտիվության մեծացմանը: Մեթոդը թույլ է տալիս ամրապնդել ավելի վաղ ձեռք բերված գիտելիքները և լրացնել բաց թողնված տեղեկատվությունը: Գիտելիքների

³ Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ

փոխանակման հետ մեկ տեղ աշակերտները սովորում են արտահայտել իրենց մտքերը, գաղափարները: Սովորում են հիմնավորել և պաշտպանել համոզմունքները: **Brainstorming «Ուղեղի փոթորիկ»**

Մասնակիցներին առաջարկվում է տալ առաջադրված խնդրին, հարցին հնարավորինս շատ լուծումներ, պատասխաններ անգամ ամենաֆանտաստիկ, անհավանական: Որից հետո բոլոր կարծիքներից ընտրվում են ամենահաջողվածները, որոնք կարող են կիրառվել գործնականում: Մեթոդը էֆեկտիվ է այնպիսի խնդիրների դեպքում, որոնք չունեն միանշանակ լուծում ու պահանջվում են ոչ ավանդական լուծումներ: Երբ պետք է արագ ելք գտնել ծայրահեղ վիճակից և կարճ ժամանակում ստանալ շատ կարծիքներ: Հաշվի են առնվում բոլոր մտքերը: Բոլոր մասնակիցները հավասար են: Արգելվում է որևէ մտքի քննադատությունը: Այս մեթոդը ընդգրկում է հետևյալ փուլերը:

1. Լուծումների, մտքերի հավաք: Բոլոր մտքերը գրանցվում են: Կարևոր է, որ մասնակիցները չընկճվեն արտահայտել անգամ ամենաանհավանական կարծիքները:
2. Վերլուծություն՝ քննարկվում են բոլոր առաջարկները:
3. Բոլոր առաջարկված լուծումներից, մտքերից ընտրվում է ամենահետաքրքիրը:


2.2 Պասիվ և փոխներգործուն ուսուցման մեթոդներ. դրանց տարբերությունը

Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը միշտ պայմանավորված է գործնական պահանջներով: Այժմ ուսումնական հաստատությունում ուսուցման ռազմավարությունը փոխարինվում է զարգացման ռազմավարությամբ: Այսօր պետք է ձգտել ուսուցչակենտրոն ուսուցումից անցում կատարել աշակերտակենտրոն ուսուցմանը: Ամբողջ կյանքի ընթացքում ինքնազարգացման ռազմավարությունը հնարավոր կլինի եթե դեռ աշակերտը կանա թե ակամա դառնում է դասապրոցեսի մասնակից: հետազոտական գործունեությանը: Ուսուցիչը պետք է շարժառիթ ստեղծի, հետաքրքրություն առաջացնի: Իսկ դրա համար ուսուցման պրոցեսը, պետք է հետաքրքիր լինի: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն բովանդակության մատչելի հասանելի ներկայացումը: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի մեթոդներ, որոնց շնորհիվ աշակերտը կամա թե ակամա դառնում է դասապրոցեսի մասնակից: Հետազոտությունները ցույց են տվել, որ

- Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10%
- Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%
- Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30%
- Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50% Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը: Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը՝ ակտիվ փոխներգործուն մեթոդների կիրառմանը:


Ուսուցման պրոցեսում տարբերում են դասավանդման պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

ՊԱՍԻՎ ՄԵԹՈԴ



Պասիվ մեթոդ Այս դեպքում ուսուցիչը հիմնական գործող անձն է, որը ղեկավարում է դասընթացը, իսկ աշակերտները պասիվ լսողներ են: Ուսուցիչ –աշակերտ կապը իրականացվում է հարցումների, թեստերի, ստուգողական աշխատանքների միջոցով: Այս մեթոդը քիչ էֆեկտիվ է: Դրա առավելությունը միայն սահմանափակ ժամանակում նյութի մեծ ծավալի մատուցումն է: Ակտիվ մեթոդները հիմնված են ուսուցիչ աշակերտը համագործակցության վրա, այսինքն ուսուցիչը և աշակերտը հավասարապես մասնակցում են ուսումնական պրոցեսին:


ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴ



Աշակերտները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ: Ակտիվ մեթոդների նպատակն է՝ բոլոր պրոցեսների (խոսք, հիշողություն, երևակայություն) օգտագործումն գիտելիքների, հմտությունների յուրացման համար: Աշակերտը գիտելիք է ստանում տարբեր աղբյուրներից ինֆորմացիայի վերլուծման արդյունքում: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորելու, ճանաչողական 3 գործունեություն ծավալելու ուղիներն են, ինչի համար աշակերտները պետք է մտածեն, ստեղծագործեն: Փոխներգործուն մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «interփոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում աշակերտները համագործակցում են ոչ միայն դասավանդողի , այլև միմյանց հետ:

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴ





Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով մասնակիցներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը: Ուսուցչի ֆունկցիաներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:
2. Բաժանել աշակերտներին խմբերի և տալ հանձնարարություններ:
3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն մինևույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող աշակերտը:
5. Օգնել աշակերտներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն: Ուսուցչի ֆունկցիան աշակերտի ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է : Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ, ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ աշակերտը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի, վերլուծի և հետագայում մասնագիտական գործունեության ժամանակ թույլ չտա:

Այսպիսով՝ ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության հիմնական տեղեկատու, միայն կարգավորում կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը

հանրակրթական դպրոցում, կատարել ենք հետևյալ եզրակացությունը.

- Դասավանդման մեթոդները կարող են նկարագրվել որպես ուսումնասիրության վերջնարդյունքներին հասնելու միջոց:
- Ուսուցչի վարպետությունից դասարանի առանձնահատկությունների համապատասխան՝ ճիշտ մեթոդի ընտրությունից է կախված դասի արդյունավետությունը:
- Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտների հետևողական, փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը:
- Ինտերակտիվ մեթոդները կիրառելիս, ուսուցիչը դադարում է լինել տեղեկատվության հիմնական տեղեկատու, միայն կարգավորում կազմակերպում է գործընթացը, տալիս խորհրդատվություն

Աներկբա է, որ այս հետազոտության ընթացքում ձեռք բերած գիտելիքները հետայսու արդյունավետ կերպով կկիրառենք մեր մանկավարժական գործունեության ընթացքում՝ նպատակ ունենալով սովորողների մեջ ձևավորել ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական հմտություններ դասավանդման շրջանակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յուրի, Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, մանկավարժ. հրատ.: Երևան 2004թ, 456 էջ:
 2. Ղուլումյան Գ.Ե. Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով : Գիրք I –Եր., Ջանգակ-97, 2005թ 463 էջ:
 - 3 Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:
- 4 Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, 2 հատորով, հ. 1, Երևան, Հայպետուսմանկհրատ, 1958թ.:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ

- 5 <https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4>
- 6 https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4
- 7 <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>